

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1914ԷՆ ԱՌԱՋ ԵՒ ՎԵՐՋԸ

Բ.

Ներկայ դարը կը գտնուի ոչ թէ ոսկիին այլ ածուխին, երկաթին և քարիւղին լուծին տակ: Այս երեքն են ազգային հարստութեան և ուժին ամենաշահան աղբիւրները: Ընդունուած իրողութիւն մըն է թէ անկլո-սաքսոն աշխարհը նախանձելի գերակշռութիւն մը ունի լատին և ուրաւ ազգերու վրայ: Ումանք և նոյն իսկ կրնանք ըսել շատեր, այդ գերակշռութիւնը կը վերագրեն ցեղային ազգականներու: Թիւր ըմբռնում մըն է այս: Եթէ Անգլիա, Ամերիկա և Գերմանիա Ֆրանսայէն, Իտալիայէն և Ռուսիայէն բեր ի վեր դիրքի մը մէջ կը զբաղանային, այդ գերազանցութիւնը հետեանք է ոչ այնքան մտաւորական և հոգեբանական երևույթներու որքան ածուխի, երկաթի և քարիւղի այն հսկայ հանքերուն որոնցմով բնութիւնը օժտած է զիրենք:

Պատմագէտներու և քաղաքագէտներու գործած աններելի սխալը աս է թէ անոնք անտեսած են անտեսականին ազդեցութիւնը պատմութեան վրայ: Հանրութեան մէջ զեռ կը տիրէ սա համոզումը թէ պատերազմներու տեղի տուող պատճառները եղած են միշտ թաղաւորներու և իշխաններու յիմար փառասիրութիւնները, պալատականներու էնթրէկները, կրօնական մոլեռանդութիւն, և կամ ազգային կրքեր և թիրախացութիւններ: Սխալ և մեծ սխալ: Իրականին մէջ պատերազմներու մեծ մասին դրդապատճառները անտեսական բնոյթ ունին:

Յորմէհետէ քաղաքակրթութիւն բոլորած քանը իր մուտքը գործէց աշխարհի բնմին վրայ, խուլ պայքար մը ծայր տուաւ ազգերու և ցեղերու միջեւ ձեռք բերելու համար անտեսական այն աղբիւրները որոնց կարեւորութիւ-

նը ժամանակի պահանջմանց համեմատ կը տարբերէր: Հին փաստաթուղթերէն կը տեղեկանանք թէ հովուական չըջաններուն մէջ կըռիւնները կը մղուէին ոչխարի, այծի և կովու հօտերու շուրջ: Այդ հօտերը սնուցանելու համար պէտք կար անշուշտ արգասաբեր դաշտերու և ձորերու: Ահա թէ ինչո՞ւ կռիւնները կ'ընդարձակուէին. քանի յառաջացաւ քաղաքակրթութիւնը, այնքան սաստկացան պատերազմները, հողազործական գետնի վրայ առաւելութիւններ ապահովելու նպատակաւ:

Նեղոսին, Եփրատին, Հոնդոսին, Հիւսիսային Գերմանիոյ, Հունդարիոյ և Լոմպարտիոյ դաշտերուն տիրապետմանը համար մղուած պատերազմները պերճախօս ապացոյցներն են մեր յայտնած ճշմարտութեան: Ծովերու վրայ Հոլանտացիներուն և Հանսէաթիք ազգերուն թափած արիւնը ի՞նչ էր եթէ ոչ ձեռք ձգել զաղթավայրեր, մենաշնորհներ, նաւային խարխիւներ, եւայլն: Սիկիլիոյ ցորենի դաշտերուն տիրապետութեանը համար չէ՞ր սր Հռոմ և Կարթէգոն զիրար թզբտեցին այնքան տուրիներ: Հելլէնք պատերազմեցան Սիրակուսայի դէմ ո՛չ այնքան աշխարհակալութեան պապակէն ծարաւցած որքան Ատտիկէի միլիոնաւոր բերանները կերակրելու ստիպողականութենէն մղուած: Հաւանաբար Տրոյականի դէմ մղուած պատերազմներն ալ նոյն շարժառիթներուն վերագրելի են: Յունաստանի արմտիքը Սև Մովէն կուղար, և սրովհետեւ Տրոյական կը տիրէր Նեղոսներուն, Հելլէնք ստիպուած էին կռուելու՝ ապահովելու համար իրենց գոյութեան անհրաժեշտ այդ պարենաւորումը:

Արդ եթէ նախնական ժամանակներու մէջ

ազգերը հացի, ցորենի, մսի և ձուկի համար կը կուռէին, շատ պարզ և բնական է որ ճարտարարուեստական ներկայ շրջանին մէջ ալ կռիւները կեդրոնական այն տեսակ նիւթերու շուրջ որոնք կը կաղմեն հարստութիւն, ուժ և թիւ — ածուխ, երկաթ և քարիւղ:

Դիւանագէտներ և քաղաքագէտներ չեն կրցած ըմբռնել ածուխի, երկաթի և քարիւղի քաղաքական և զինուորական արժէքը: Շատ մը պետական մարդիկ և հրապարակագիրներ դեռ կը կատչին սա համոզման թէ հող և թիւ յաղթական ազգերու բուն նպատակը կը կաղմեն: Միայն Գերմանիոյ ժամանակին թափանցած են սա գաղտնիքին թէ թիւը և հողի տարածութիւնը չեն ազգի մը հարստութեան և ուժի հիմնաքարերը, այլ ածուխի, երկաթի և քարիւղի հանքերը: Յաճախ կը լսենք սա յանկերգը թէ մեծ պատերազմին Գերմանիոյ հետապնդած նպատակն էր Դաշնակիցներէն կորզել գաղթաւայրեր հոն տեղաւորելու համար իր աւելորդ բնակչութիւնը: Ատիկա պատրուակ մըն էր միայն քողարկելու համար բուն նպատակը որ կը կայանար Անգլիայէն դուրս Եւրոպայի մէջ գտնուող ածուխի, երկաթի և քարիւղի կարեւոր բոլոր հանքերը իր զինուորական լուծին տակ առնել:

Պօնաքարթ ըսած է թէ նախախնամութիւնը միշտ թիւը կը նպաստաւորէ: Անտարակոյս, երբ հակառակորդները հաւասարապէս կաղմակերպուած են, վերջին խօսքը թիւին կը մնայ: Հին աշխարհակալները կ'աշխատէին միշտ գըրաւել այն տեսակ հողեր որոնք ընդունակ էին իրենց բանակները կերակրելու: Ածուխի և երկաթի դարուն՝ հողագործական երկիրները կորսնցուցած են իրենց հրապոյրը յաշտ փառասէր պետութիւններու: Ներկայիս աշխարհակալութիւնը նպատակակէտ ունի ածուխ, երկաթ և քարիւղ արտադրող գաղթաւայրերը, որովհետեւ հոն է որ ամենէն աւելի կ'աճի թիւը: Այս է փորձառութեան գաղտնիքը:

Ճարտարարուեստական աշխարհի մէջ ածուխի յառաջ բերած յեղափոխութիւնը կը սկսի 1760 ին: Մինչև այդ թուականը Անգլիոյ և Գերմանիոյ բնակչութիւնը աւելցած է 5%էն մինչև 35%: 1760էն մինչև 1919 թէ՛ Անգլիա և թէ՛ Գերմանիա աճած են 500% համեմատութեամբ: Նոյն երեւոյթը կը պարզէ Ամերիկա որ հողագործութեան մէջ շատ աւելի հարուստ է քան Անգլիա և Գերմանիա: Այսպէս

մինչև 1860 Ամերիկայի բնակչութիւնը կը տարուրերէր 30 միլիոնի շուրջ: 1860 էն մինչև 1919 հասած է 115 միլիոնի: Պատճառը դիւրահասկանալի է: Հին ժամանակներ մարդիկ կ'ապրէին իրենց ձեռքի արտադրութեամբ: Հիմա մեքենան է որ ձեռքի տեղը կը բռնէ: Ըլլայ վաշտի վրայ, ըլլայ գործարանի մէջ, մեքենայով աշխատող գործաւոր մը կրնայ արտադրել ձեռքով աշխատող բազմաթիւ գործաւորներու չափ: Ուրեմն այն երկիրը որ ունի ամենէն աւելի մեքենագործ աշխատաւորներ, ամենէն բարգաւաճն է թէ՛ թիւի եւ թէ՛ հարստութեան կրկնակ տեսակէտներով: Եթէ Ֆրանսոս մինչև 1914 տկար և յետամնաց եղած էր բաղդատմամբ Անգլիոյ, Գերմանիոյ և Ամերիկայի, այդ յետամնացութեան բուն պատճառը ածուխի, երկաթի և քարիւղի աղքատութիւնն էր:

Առանին պէտքերու համար սպառած ածուխը համեմատութիւն չունի ճարտարարուեստական պէտքերու պահանջած ածուխի քանակին հետ: Սպառման 20% ը կը պատկանի առանին պէտքերու, մնացեալ 80% ը ճարտարարուեստը կը կլանէ: Երկրի մը սպառած ածուխին քանակը կը ներկայացնէ անոր ճարտարարուեստական յառաջդիմութեան օղակափը, ինչպէս կ'երեւի հետեւեալ թուանշաններէն.

Անգլիա		
1865	բօն	96,760,000
1875	,,	135,400,000
1885	,,	161,962,000
1905	,,	194,350,000
1913	,,	239,890,000

Գերմանիա		
1865	բօն	28,330,000
1875	,,	48,530,000
1885	,,	73,670,000
1905	,,	103,960,000
1913	,,	173,660,000

Ամերիկա		
1865	բօն	24,790,000
1875	,,	48,200,000
1885	,,	102,180,000
1905	,,	177,590,000
1913	,,	351,120,000

	Ֆրանսա	
1865	բօն	11,840,000
1875	,,	16,950,000
1885	,,	19,950,000
1905	,,	28,240,000
1913	,,	36,050,000

Ածուխի սպառման վերոյիշեալ ցուցակը ցոյց կուտայ իւրաքանչիւր երկրի տնտեսական յառաջդիմութեան որոշ չափը: Հաշիւ եղած է որ եթէ ածուխի սպառումը այս համեմատութեամբ յառաջդիմէ, տիեզերքի պէտքերը եօթը հազար տարի ապահովուած պիտի ըլլան: Իսկ դառն չափաւորակիւն ածխային հանքերու պարունակութեան, 1913ին՝ կապուած են հետեւեալն էր.

Եւրոպա	բօն	784,190,000
Հիւս. Ամերիկա	,,	5,073,426,000
Հարավային Ամերիկա	,,	1,279,586,000
Ափրիկէ	,,	57,839,000
Աւստրալիա, Ովկիանիա	,,	173,410,000
		7,368,451,000

Այս թուանշաններէն բացայայտ է թէ Հիւսիսային Ամերիկա, այսինքն բուն Ամերիկա և Քանադա, կը տիրեն աշխարհի ածխահանքերուն երկու երրորդին:

Ածուխի հարստութեան մէջ Ամերիկայէն վերջը կուգայ Ասիա: Զինաստան Ասիոյ ամենահարուստ ածխահանքերը ունի: Շանդի որ Քիաու-Շաուի մէջ կը գտնուի, կը պարունակէ ոչ միայն ածուխի բնորոշ հանքեր այլ նաև pigiron (երկաթի ձող): Գերմանիա ժամանակին ձեռք դրաւ Քիաու-Շաուի վրայ ոչ թէ Հոնկոնկի հետ մրցելու, այլ ածխի չինական գործաւորողչէքով շահագործելու համար աշխարհի ամենահարուստ ածուխի և երկաթի հանքերէն մէկ քանին: Ածուխ և երկաթ արտադրող Հնդկաստան մը շատ աւելի օգտակար պիտի ըլլար Անգլիոյ քան բրինձ և մարգարիտ արտադրող Հնդկաստան մը:

Երրորդ կուգան Եւրոպայի ածխահանքերը: Ապագային թերեւս ծովու ալիքներէն և արեւու ճառագայթներէն ձեռք բերուելիք երկատրականութիւնը ըլլայ մեքենական ուժի բուն աղբիւրը: Ներկայիս ածուխն է որ կը հայթայթէ այդ ուժը: Եթէ այս անհերքելի ճշմարտութիւն մըն է, այն ատեն ստիպուած ենք ընդունելու թէ Ամերիկեան կիսագունդը սահմանուած է ըլլալ միանգամայն զինուորա-

կան ածուխի և ճարտարարուեստական բարդաւաճումի գլխաւոր կեդրոնը: Թուանշանները պերճախօս լեզուով մեզ յայտնեցին թէ Ամերիկա ինքնին աշխարհի արտադրութեան 50%-էն աւելի, Եւրոպայի արտադրանքէն 5 անգամ աւելի և Անգլիոյ արտադրանքէն 20 անգամ աւելի կ'արտադրէ: Ըստ մասնագէտներու մաթեմատիքին՝ Ամերիկայի ածխահանքերու տարածութիւնը 500,000 քառակուսի մէթր է:

Բնութիւնը բնաւ կամ քիչ առատաձեւն գտնուած է Ֆրանսայի, Իտալիոյ և Ճափոնի: Անշուշտ պատերազմէն առաջ Գերմանիա նպաստաւորեալ զիրքի մէջ կը գտնուէր, քանզի ցամաքային Եւրոպայի 55% կ'արտադրէր: Պատերազմէն առաջ Գերմանիոյ ունեցած ածուխը Անգլիոյ ունեցածին կրկինն էր: Հոնոս և Վէսթֆալիա կը պարունակեն Տիւրեւորֆ, Էսսէն, Տուրգուրկ, Տօրթմունտ, Էլպըրֆերա, Կելսըր, Քիլիսըն, Պարմըն, Պոխում, Միւլհայմ, Քրեֆելտ, Համպոն, Սոլինկըն, Ռուլ-շերտ քաղաքները որ կ'արտադրէին չուրջ 214,000,000 թօն: Պէտք չէ ուրեմն զարմանալ թէ ինչո՞ւ վերոյիշեալ կեդրոնները Գերմանիոյ է՛ն վաճառաչա՞, է՛ն հարուստ եւ է՛ն խիտ բնակչութիւնը ունեցող վայրերն են:

Ածուխին զերազանց կարեւորութիւնը կամ օգտակարութիւնը բացատրելի չէ միայն ճարտարարուեստական, զինուորական և քաղաքական նկատումներով: Գիտականապէս ալ բազմաշողմանի օգտակարութիւն ունի: Ածուխէն կ'ելլէ կապ, խալձղան, մեքենայի իւղ, պէնզօլ, նաֆթալին, քրէոզօթ, աֆօնաֆ: Ածուխէն կը ստանանք նաեւ հարիւրաւոր տեսակ ներկեր, հալանեխիչներ, պայթուցիկ նիւթեր: Դարձեալ ածուխէն կ'ելլէ սաֆաւիւն, փէնստէքին, անթիփիլին եւայլն, եւայլն:

Հին դարերու քաղաքակրթութիւնը հիմնուած էր փայտի և փայտածուխի վրայ: Ներկայ դարը ածուխի, երկաթի և քարեղի դարն է: Ճարտարարուեստ, հողագործութիւն, երկաթուղի, նաւ, վերջապէս ամեն ինչ իր յառաջդիմութիւնը կը պարտի արոյրի: Երկաթի արտադրութեան ծաւալումը այնքան արագ եղած է որքան ածուխինը: 1913ին Սթոքհոլմի մէջ գումարուեցաւ միջազգային ժողով մը որուն նպատակն էր ճշդել երկաթի համաշխարհային քանակը: Այդ ժողովին պատրաստած ցանկէն կը քաղենք հետեւեալ թուանշանները.

Եւրոպա	բօն	1,733,000,000
Ամերիկա	,,	5,154,000,000
Ասիա	,,	156,000,000
Աֆրիկէ	,,	75,000,000
Աւստրալիա	,,	74,000,000
		7,192,000,000

Ամփոփելով տրուած բացատրութիւնները և բաղդատութիւնները, կը տեսնէք թէ Ամերիկա Եւրոպայէն զրեթէ հինգ անգամ աւելի անուխ և երեք անգամ ալ աւելի երկաթ ունի:

Մեր յառաջարանին մէջ յիշեցինք յոռետեսներու չափազանցուած այն կարծիքը թէ Անգլիա որ յաղթական Դանիելիցներու գլուխը կը գտնուէր, ընկճուած դուրս եկաւ մեծ պատերազմէն, նկատելով որ 1,000,000,000 անգլիականի պարտքը կը հաւասարի իր ազգային հարստութեան: Այս անհեթեթ եզրակացութիւնը հերքելու համար ճշգրտեցինք թէ Անգլիոյ ազգային հարստութիւնը մինչեւ 1913 ոչ թէ 1,000,000,000 անգլիական այլ 15,000,000,000 անգլիական էր: Սակայն պատերազմական պարտքերու ազգային հարստութեան հանգէպ ունեցած յարաբերականութիւնը քննելէ առաջ՝ աղօտ մտքերու պէտք է բացատրել թէ ի՞նչ կը նշանակէ ազգային հարստութիւն կոչուածը:

Ազգային հարստութիւն և առհասարակ հարստութիւն տարբեր բաներ են: Ժողովուրդներու մեծ մասը կը չփոթէ այս երկուքը: Անհատական մարդու կեանքը կարճ է, իսկ ազգի մը կեանքը երկար և երբեմն յաւիտենական: Ձեռք կրնար ուրեմն ազգի մը հարստութիւնը չափել պարզապէս դումարելով զայն կազմող անհատներուն կեանքի տարիները: Ուրիշ խօսքով ազգի մը հարստութիւնը կայուն չէ: Ան ենթակայ է ելեւէջներու որոնք դատապարտուած են ըլլալու մերթ նստաստուոր մերթ աննպաստ: Իսկ այդ ելեւէջներուն էնտէքսը կը կազմեն նոյն ազգին քաղաքական հասունութիւնը և քաղաքակիրթ ոգին:

Երբ ունէ ազգի մը ընդհանուր պարտքը նկատի կ'առնենք, լաւ պէտք է դանդաղենք թէ այդ ազգին պարտքը զայն կազմող անհատներուն թէ օտարներուն ձեռքը կեդրոնացած է: Անգլիական կառավարութիւնը իր պատերազմական պարտքին 85% ը իր իսկ Ժողովուրդին կը պարտի: Այնպէս որ անգլիական կառավարութեան թղթադրամ պարտքը անգլիական Ժողովուրդին թղթադրամ հարստութիւնը կը

կազմէ: Նախընթացներ չեն պահսիր ապացուցանելու համար թէ ներքին պարտքը չ'աղքատացներ ազգ մը: Յեղափոխական շրջաններուն, Ֆրանսա քանիցս դրժեց իր պարտքերը եւ տարօրինակ հետեանքը սա եղաւ որ Ֆրանսացիք աւելի հարստացան քան աղքատացան: Դժուար չէ բացատրել այս տարօրինակ թուող երևոյթը: Երբ կառավարութիւն մը չկարենայ հասուցանել իր պարտքը, քանի մը մեծ դրամատէրեր կրնան փճանալ, բայց այդ փճացումը չի կրնար ցամքեցնել ազգին հարստութեան աղբիւրները, որոնք են հանքերը, դաշտերը, ֆապրիքները եւայլն: Խնդիրը անշուշտ կը տարբերի-երբ ազգ մը կը պարտի օտարներուն: Քանզի օտարը տոկոսներու վճարումը կը պահանջէ ոսկիով և ապրանքով որոնք կը կազմեն երկրին իրական հարստութիւնը:

Ելմտադէտներն և սեղանաւորները ամբողջ կեանքերնին կը տապալտկին թղթադրամներու մէջ: Թուղթերու այդ ճակատամարտը կ'աղօտէ անոնց տեսիլը և յաճախ կը մղէ զիրենք չափազանցելու թղթադրամի կարեւորութիւնը: Ըստ երմտական մտայնութեան՝ թղթադրամը հոմանիշն է ազգային հարստութեան: Թէ այս հայեցակէտը գործնականապէս սխալ է, պատմութեան վկայութիւնը վերջնական է: Գրեթէ և ո'չ մէկ ազգ կործանած է իր թղթադրամին երեսէն, բայց շատ մը ազգեր կործանած են իրենց հարստութեան աղբիւրներուն փճացմամբ: Այդ աղբիւրները կրնան փճանալ թէ՛ խաղաղութեան և թէ՛ պատերազմի ժամանակ: Երեսուն տարիներու պատերազմը քանդեց Գերմանիան սա պարզ պատճառաւ որ այդ պատերազմը ոչնչացուց երկրին ընտանի կենդանիները, մեքենաները, գործիքները, ամալացուց քաղաքները և չորացուց դաշտերը: Եփրատի մէջ արարական կայսրութեան ահադին հարստութիւնը փճացաւ երբ Թուրքին թուրք քանդեց Միջագետքի ջրանցքները և սոսկումի կողմածքը, որոնցմէ կը սնանէր հոյապոքոնութիւնը: Վենետիկ կորսնցուց իր հարստութիւնը այն օրը երբ Փորթուկալցիք Բաբելոնոյ Գլուխը հասնելով նոր ճամբայ մը բացին զէպ ի Հնդկաստան, այսինքն Միջերկրականը դադրեցաւ ծառայելէ իբր Արեւելքի և Արեւմուտքի առևտուրի դուռը:

Ուրեմն Մեծն Բրիտանիա չի կրնար կործանիլ իր թղթադրամի պարտքէն որքան ալ մեծ ըլլայ ան: Արդէն գրամը՝ ըլլայ ան նոյն-

խակ ոսկի, էտալէս պատկեր (simulacre) մըն է հարստութեան: Արդատարեր դաշտեր, հարուստ հանքեր, և մեծ գլուխներ, ահա՛ ազգի մը իրական և տեւական հարստութիւնը: Այդ արդատարեր դաշտերը, հարուստ հանքերը և մեծ գլուխները կը թարգմանուին թիւով և արտադրութիւնով: Երբ ազգի մը թիւը և արտադրութիւնը աւելնան, այդ ազգին հարստութիւնը և եկամուտը ինքնաշարժօրէն կը բարձրանան: Տեսանք թէ հարիւր տարի տաջ Անգլիոյ ազգային հարստութիւնը 1,500,000,000 անգլիական ոսկի, իսկ եկամուտը 250,000,000 անգլիական էին. այսօր այդ թիւերը եղած են 15,000,000,000 անգլիական և 2,500,000,000 անգլիական, այսինքն մէկ դարու մէջ թէ՛ հարստութիւն և թէ՛ եկամուտ տասնապատուած են: Եթէ պահ մը Բրիտանական կայսրութեան ծաւալման կարելիութիւնները նկատի առնենք, ընտ անտեղի կամ անտրամաբանական չպիտի ըլլայ ենթադրել թէ դար մը վերջը, այն է 2030 ին, Անգլիոյ ազգային հարստութիւնը և եկամուտը կրնան հասնիլ 150,000,000,000 և 25,000,000,000 անգլիականի: Այդ պարագային Անգլիոյ ներկայ 1,000,000,000 անգլիականի պարտքը՝ եթէ նոյնիսկ ունէ փոփոխութիւն չկրէ մինչեւ այն ատեն, չըսենք բոլորովին անհետանայ, դարձեալ այնքան թեթեւ պիտի նստի յաջորդ սերունդին ուսերուն որքան Նարոյէտնեան պարտքը նստած է Ֆրանսայի ներկայ սերունդին ուսերուն: Անգլիա գեւ նոր պիտի սկսի լիովին շահագործել դաղթաւայրերուն բնական հարստութիւնները որոնց առատակական արժէքը ժամանակը միայն կրնայ ճշդել: Ծայրայեղ ենթադրութեանց ամենածայրայեղը ենթադրելով ըսենք թէ Անգլիա հարիւր տարի վերջը կորսնցուց իր գաղթաւայրերը և իր ներկայ պարտքը անփոփոխ մնաց, նոյնիսկ այս առեակ աղէտալի փորձանքի մը պահուն կրկին Անգլիա կրնայ իր ներկայ պարտքը վճարել. թօնօն 10 չիլինէն Անգլիոյ ամխահանքերը ներկայիս կ'արժեն 100,000,000,000 անգլիական ոսկի. իսկ եթէ ընթերցողը կը հետաքրքրուի դիտեալ թէ Անգլիոյ արտադրական և թուական աճումով ի՞նչ համեմատութեամբ աճած են նաև Անգլիացւոց ազգային եկամուտները հետեւեալ թուանշանները կրնան գոհացնել այդ հետաքրքրութիւնը —

Ճէյմս Ա.	Ա. Ո.	56,000,000
Չարլս Ա.	,,	130,000,000
Չարլս Բ.	,,	200,000,000
Ճէյմս Բ.	,,	318,000,000
Ուիլիամ Գ.	,,	415,000,000
Թագուհի Աննա	,,	510,000,000
Ճօրն Ա.	,,	318,000,000
Ճօրն Բ.	,,	700,000,000
Ճօրն Գ.	,,	1,300,000,000
Էտուարտ Է.	,,	1,800,000,000
Ճօրն Ե. (1913)	,,	2,500,000,000

Ընդունուած անտեսական օրէնք մըն է թէ պատմական ժամանակներու ազգերու հարստութիւնները փոխանակ նուազելու կը բազմապատկուին: Այդ յաւելման պատճառները երկու են: Առաջին՝ ժողովուրդներու թուական և արտադրական ուժերու դարգացումը: Երկրորդ՝ դրամին արժէքի արագ անկումը: Այսպէս կ'երևի թէ այս երկու ազգակները նոյն ուղղութեամբ պիտի գործեն և ներգործեն ցորչափ քաղաքակրթութիւնը ըսուած բանը շարունակէ. միայն դրամի արժէքի անկումը կը բաւէ 30—40 տարիէն Անգլիոյ ներկայ պատերազմական պարտքը իջեցնելու 500,000,000 անգլիականի և նոյնիսկ 250,000,000 անգլիականի: Ընթերցողին թերեւս դժուար ըլլայ հասկնալ թէ ինչո՞ւ. բացատրենք:

Դարերէ ի վեր դրամին արժէքը կ'իյնայ: Տասներեքերորորդ դարուն եղ մը կ'արժէր 10 չիլին, ոչխարը 2 չիլին, ցորենը 5 չիլին, և գործաւորը կը ստանար օրական 3 բէնա: Տասնչորսերորդ դարէն վերջը գիները կը սկսին յարաճուն կերպով բարձրանալ: Տասնհինգերորդ դարուն եզան գինը եղած էր 23 չիլին, ոչխարը 3 չիլին, ցորենը 6 չիլին և գործաւորը կը ստանար 6 բէնա: Գիներու սաւառումով այդ ժամանակամիջոցին ծերերը կը գանգատէին դրամատէրերու շահագիտական ձգտումներէն և գործաւոր դասակարգի անյագութենէն: Միեւնոյն տրտունջները չէ՞նք լսեր այսօր ալ ուճախ: Միջին Դարու չըջանին դժուարութեամբ կրնային աւանդի դնել կայսերական կամ իշխանական գոհարեղէններ՝ ձեռք բերելու համար 4000 կամ 5000 ոսկի. միջնադարեան չըջանէն ցայսօր դրամին արժէքն անդադար ինկած է և այս անկման վերջը չ'երեւիր: Ներկայիս ամերիկացի գործաւորի մը շահած դրամը միջին դարու մէջ կրնար գերի բռնուած թագաւորի մը կեանքը փրկել:

Տնտեսագետները յաճախ կը կրկնեն ու քարոզը թէ ոսկիի և արծաթի քանակին շատնալը միակ պատճառը կը կազմէ դրամական անկման: Տեղիք կայ կարծելու թէ այդ երկու մետաղներու քանակին աճումը դրամական անկման պատճառներէն մին է, բայց ո՛չ գլխաւորը: Այդ գլխաւոր պատճառը պէտք է փնտռել շահադիտութեանց մէջ (speculation): Շահադէտները միշտ պէտք ունին առատ դրամի՝ բազմապատկելու համար իրենց շահերը: Թողականութիւն և գործաւորողչէքներու բարձրացումը ուղղակի հետեւանքն են այս անկումին որ ուշ կամ կանուխ անխուսափելիօրէն դատապարտուած է պատերազմական պարտքերը կեղծելու:

Անշուշտ ազգային հարստութիւն ըսուած բանը մաթեմատիքական ճշգրտութեամբ ճշգրտելու համար է, սա պարզ պատճառաւ որ կան Անգլիոյ պէս երկիրներ որոնց հարստութիւնը անհաշուելի է: Պաշտօնական վիճակադրութիւններէ կը քաղենք հետեւեալ թուանշանները որոնց վրայ յենլով ընթերցողը կրնայ համեմատութեան դնել Անգլիոյ, Ֆրանսայի և Ամերիկայի հարստութիւնները.

Անգլիա		
	Ա. Ո.	
1800 ին		1,800,000,000
1815 ,,	,,	3,200,000,000
1853 ,,	,,	6,700,000,000
1871 ,,	,,	9,100,000,000
1879 ,,	,,	10,800,000,000
1913 ,,	,,	15,300,000,000

Ֆրանսա		
	Ա. Ո.	
1800 ին		1,600,000,000
1815 ,,	,,	2,000,000,000
1853 ,,	,,	5,300,000,000
1871 ,,	,,	7,000,000,000
1879 ,,	,,	7,500,000,000
1913 ,,	,,	9,100,000,000

Ամերիկա		
	Ա. Ո.	
1800 ին		1,500,000,000
1815 ,,	,,	3,500,000,000
1853 ,,	,,	7,000,000,000
1871 ,,	,,	13,000,000,000
1879 ,,	,,	17,000,000,000
1913 ,,	,,	21,000,000,000

Աւելորդ է կրկնել թէ ամերիկեան մէթոս-

ները ընդգրկելով Անգլիա կրնայ եռապատկել թէ՛ իր արտադրական ուժը և թէ՛ եկամուտը և այդպէս դարձեալ վերագրաւել առաջնութիւնը, թէեւ այս իրողութիւնը չի կրնար նուազեցնել և կամ պէտք չէ նուազեցնէ մեր հիացումը Նոր Աշխարհի հրաշալի յառաջդիմութեան վրայ՝ քաղաքակրթական կեանքի բոլոր մարգերուն մէջ:

Զիարծուի սակայն թէ Ամերիկեան կազմող տէրութիւնները հաւասարապէս հարուստ են: Հակառակ հողի աղքատութեանը և կլիմայի սաստկութեանը, հիւսիսը ամենահարուստ մասն է: Պատճառը. որովհետեւ լի է ածուխի և երկաթի հանքերով և հետեւաբար ամենաընդունակը առեւտրական և ճարտարարուեստական դարգացման: Նիւ-Եորք, Փենսիլվանիա և Իլլինոյս, որոնք երեքը միասին Ամերիկայի մէկ երեսուններորդ մասը կը կազմեն, Ամերիկայի հարստութեան մէկ երրորդը կը պարունակեն, իսկ հարաւային հողամասը որ իր քաղցր կլիմային և պարարտ հողին շնորհիւ կ'արտադրէ բամպակ, շաքար և ծխախոտ, Ամերիկայի ամենաաղքատ մասն է: 63 տարուան մէջ, այն է 1850 էն մինչեւ 1913, Նիւ-Եորքի հարստութիւնը 5 անգամ, Փենսիլվանիայի հարստութիւնը 20 անգամ և Իլլինոյսի հարստութիւնը 100 անգամ շատցած են, մինչ Լուիզիանայի, Ալապամայի, Թեննեսիի և Վիրճինիայի հարստութիւնները միջին հաշուով 6 էն 9 անգամ աւելցած են: Այս ճշմարտութեան անուղղակի ապացոյցը սա է որ անցեալին երբ քաղաքակրթութիւնը չէր ըմբռնած ածուխի, երկաթի և քարիւղի կենսականութիւնը, Վիրճինիա ոչ միայն Ամերիկայի ամենախաւրտ բնակչութիւնը ունէր այլ անոր ամենահարուստ մասը կը կազմէր: Անցողակի ընթերցողին յիշեցնենք Լուիզիանայի պատմական անցեալը:

1803ին Պոնապարթ դրամական մեծ անձակութեան մէջ դառնուելով յարմար դատեց ձեռքէ հանել Լուիզիանան որ այն ժամանակ Ֆրանսայի կը պատկանէր, և ունէր 50,000 բնակիչ մօտ 10,000,000 քառակուսի քիլոմէթր տարածութեամբ, ինչ որ կը նշանակէ թէ Անգլիայէն 7 անգամ աւելի մեծ էր: Նաբօլէոն իր գանձային նախարար Մառպուայի միջոցաւ 100,000,000 ֆրանք պահանջեց: Ամերիկա իր դեսպանին Պ. Լիվինկսթընի միջոցաւ յօժարեցաւ վճարել պահանջուած գումարին կէսը,

այն է 50,000,000 Փրանք: Բանակցութիւնք վերջնական էլքի մը յանգեցան 1803 մայիս 13 ին: Այդ թուականին Ամերիկա 60,000,000 Փրանքի փոխարէն Ֆրանսայէն զնեց Լուիզիանա կոչուած անապատը: Պաշտօնական վիճակագրութիւններէ կը տեղեկանանք թէ ներկայիս Լուիզիանա կը կերակրէ աւելի քան 25 միլիոն Ամերիկացի որոնք կը ներկայացնեն 500,000,000 անգլիականի պատկառելի հարստութիւն մը: Կը տեսնէք թէ ի՞նչ հրաշքներ կը գործեն կորով և ձեռներեցութիւն կոչուած ուժերը:

Մեզի կ'ըսեն թէ բնութիւնը այնքան առատաձեռն դտնուած է Ամերիկայի որ ոչինչ կայ դարմանալի ամերիկեան աննախընթաց յառաջդիմութեան մէջ: Ինքնախարկութիւն է այս: Եթէ առանց կորովի և ձեռներեցութեան երկիր մը կրնայ աճիլ և բարգաւաճիլ, այն առեն Մեծն Բրիտանիոյ ներկայ հարստութիւնը շատ աւելի պէտք էր ըլլալ Ամերիկայէն: Արեւունման բացայայտ իրողութիւն մըն է որ թէ՛ թիւի և թէ՛ բնական հարստութեանց կրկնակ տեսակէտներով բրիտանական կայսրութիւնը քանի՜ցո հարուստ է քան Ամերիկա: Անգլիացի վիճակագիրներ կ'ընդունին թէ դար մը առաջ Անգլիա Ամերիկայէն 15 անգամ աւելի հարուստ էր, իսկ 1930 ին Ամերիկա Անգլիայէն 2 անգամ աւելի հարուստ է:

Ամերիկա վստահած է իր բուրգիկն և գործածած է իր ուղեղը: Անգլիացին ապարտանած է բախտին և սպասած պարագաներու: Եթէ Անգլիացւոց զաղթալայրերը Ամերիկացւոց ձեռքը զանուէին, Մեծն Բրիտանիոյ տնտեսական ուժը կրնար եռապատկուած ըլլալ: Այս մասին խիստ համոզիչ փաստ մը կուտայ Քանադան:

1762 ին Ֆրանսա յանձնեց Քանադան Անգլիոյ: Վոլթէր հեղինած է անգլիաֆրանսական մենամարտը ըսելով թէ կ'արժէ՞ որ երկու մեծ ազգեր զիրար կը բզբռեն ... pour quelques arpents de neige. Վոլթէրի վերացական միտքը չէր կրնար դուշակել թէ չոզի եւ արոյր ուշ կամ կանուխ պիտի ջնջէին անջրպետ կոչուած արգելքը: Ուրիշ խօսքով Վոլթէրները պիտի զգուշանային թեթեամիտ ծաղրանքներէ եթէ կարենային նախատեսել թէ 2 դարուան մէջ 65,000 բնակիչ ունեցող Քանադան թէ՛ թիւով և թէ՛ հարստութեամբ նոյնիսկ Ֆրանսայէն աւելի բարգաւաճ վիճակ մը ունենալու կոչ-

ուած էր: Ապացոյց. այսօր Քանադան Ֆրանսայէն 70 անգամ աւելի ածուխ կը պարուհակէ:

Բնութեան անցեալի պատգամը այն է որ երբ ազգ մը յղիանայ հարստութեամբ և բարեկեցութեամբ, թուլութիւն և անփութութիւն ծայր կուտան: Մարդկային սեռը չէ կարողացած և երբէք չդիտի կարողանայ խոյս տալ այս անգութ օրէնքին աւերիչ ազդեցութիւնէն, խնդիր չէ թէ որքան տուփուն ըլլան ենթակայ ազգը չըջապատող ֆիզիքական և բարոյական պայմանները: Անգլիացիք ունին սակայն արդարացում մը. Անգլիացւոց laissez-faire արդիւնք է ոչ այնքան յղիացումի և անփութութեան որքան տուտրական սխալ ըմբռնումներու և կարճատես քաղաքականութեան: Կ'արժէ որ հիմնովին բացատրենք այս կէտը որովհետեւ Անգլիացւոց գործած սխալները մօտէն կը շօշափեն հայ տուտրական դասակարգին նախապաշարումները:

Անգլիական տնտեսական քաղաքականութեան վարիչ հայրը եղած է Ատամ Սմիթս: Այս համբաււոր տեսաբանը անհատապաշտ մըն էր, եւ ոչ թէ ազգայնական մը: Ան կը դիտէր և կը դատէր տնտեսական օրէնքները և անոնց հետեւանքները անհատական եւ ոչ թէ ազգային անկիւնէն: Ատամ Սմիթսի համար գոյութիւն չունէին «տէրութիւն» կամ «պետութիւն» բառերը: Ըստ իրեն անհատը և անոր շահը միայն նկատի առնուելու արժանի բաներ էին: «Իմ գրպա՛նս, թքեր եմ ազգին գրպանին վրայ»: Այս վստառողջ վարդապետութիւնէն վարակուած՝ Ատամ Սմիթսի յաջորդները յրդացան տնտեսական գիտութիւն մը որ ծառայեց դրամատերերու, միջնորդներու և շահագէտներու գրպանը լեցնելու ի վնաս արտադրողներուն: Ատամ Սմիթսի գրքով սնած ուղեղը չկրցաւ ըմբռնել թէ երբ անգլիացի վաճառականը և անգլիացի միջնորդը օտար ապրանք ծախելով շահ մը գրպանեն, այդ շահը անգլիացի գործարանատէրին կորուստն է: Ատամ Սմիթսեան շարժումին ակոյեանը եղաւ Բիչարտ Բոպորն: Այս Անգլիացին էր որ երազեց Free Trade ի, այսինքն ազատ առեւտուրի երազը: Ընդհանրապէս որքան անոյժ հնչէ երազ մը թուղթի վրայ, այնքան անիրականալի է ան իրականութեան մէջ: Free Trade ր չա՛տ ու չա՛տ սուղի նստեցաւ Անգլիոյ: 1855 էն սկսեալ Անգլիոյ իւրը կաթիլ կաթիլ սկսաւ

հալիլ: Այս հալումը շարունակեց և կը շարունակէր ցայսօր: Դէպ ի 1930, ձօզէֆ Չէմպլիէյն, Պրիմինիէմի է'ն մեծ գործարանատէրերէն և Անգլիայի պետական մարդոց է'ն հռչակաւորներէն ժին, առաջինը եղաւ նշմարող թէ անգլիական baleine ին կորսնցուցած իւրաքանչիւր ճարպի կաթիլը կ'երթայ սնուցանելու խիստ վտանգաւոր մրցակից մը յանձին Գերմանիոյ: Հինգ տարի Չէմպլիէյն միայնակ կռուեցաւ համոզելու համար իր հայրենակիցները թէ անոնք պարզապէս անձնասպանութիւն կը գործէին զոհելով արտադրութիւնը շահագրգիռութեան սիրոյն, արհամարհելով գործարանը ի փառս Stock Exchange ի, զեր ի վեր դասելով թղթադրամը իրական հարստութեանէն: Դէ տարիներ յետոյ Գերմանիայէն, Ամերիկայէն, Ճաբոնէն և ուրիշ մրցակիցներէ լաւ մը ապտակուելէ և քիթը բերանը արիւնելէ վերջը, Անգլիա ըմբռնեց թէ միջնորդ «սթօքս»ներու շահը չէ որ կը ներկայացնէ ազդի մը իրական և մնայուն ուժը, այլ անոր արտադրական կարողութիւնը: Երբ դաւ տարի երեսփոխանական ընդհանուր ընտրութիւններուն Անգլիացիք Մաքսոնալտ, Լօյա ձօրձ և ընկերութիւնը դուռը դնեն, ընթերցողը այն ատեն պիտի համոզուի թէ որքա՞ն խոր բացուած է Անգլիոյ սրտին վէրքը:

Քոպալենիզմը վնասեց ոչ միայն Անգլիոյ, այլ նամանաւանդ անգլիական գաղթավայրերուն: Յաշա Քոպալենեան Անգլիոյ՝ դրամը աւելի կ'արժէր քան մարդը: Այս քարոզը այնքան կուրցուցած էր Անգլիացիները որ յաջորդական կառավարութիւններ արգահատելիօրէն անխիթ զանուած են Անգլիոյ հոծ բազմութիւնը դէպ ի գաղթավայրերը մղելու: Այս սխալէն լրջօրէն օգտուած է Ամերիկա: 1800 էն մինչև 1900 Ամերիկա լայնօրէն բանալով դուռները ներգաղթի, բնութեան է չուրջ 33,000,000 օտար գաղթականներ որոնց մեծ մասը կը բաղկանայ իրլանդացիներէ, Սկոտլանդացիներէ և Գաղղիացիներէ: Ամերիկեան պաշտօնական վիճակագրութիւնները կ'ընդունին թէ Ամերիկա գաղթող այս Անգլիացիները կը ներկայացնեն 4,000,000,000 անգլ. ոսկիի հոյակապ նուէր մը զոր Անգլիա տխմարօրէն ըրած է կանքինքուն ի վնաս իր գաղթավայրերուն:

Բնութեան մեղ նուիրած ուժերը շահագործել կը նշանակէ հարստանալ: Այս շահագործումը կ'ենթադրէ բազուկ և ուղեղ: Թէ՛ տըն-

տեսական և թէ՛ գինուորական պայքարներու մէջ թիւն է որ կը տանի վերջին յաղթանակը գործակցութեամբ կազմակերպիչ և վարիչ ուժերու: Այդ գործակցութեան արդիւնքը ի յայտ կուգայ երկաթուղիներու, գործարաններու և ապարակներու թիւին մէջ: Եթէ իսկապէս երկաթուղիները երկրի մը առեարական զարգացումը կը ցոյցնեն, հետագայ թուանշանները հրահանգիչ են Ամերիկայի ընդհանուր յառաջգիծութեան տեսակէտով.

1850	իմ	մղոմ	9,000
1860	,,	,,	37,000
1870	,,	,,	53,000
1880	,,	,,	95,000
1890	,,	,,	167,000
1900	,,	,,	200,000
1913	,,	,,	250,000

Լա՛ւ ուշադրութիւն սա կէտին թէ ամբողջ Եւրոպան 1913 ին 208,000 մղոն երկաթուղիի դիմ ունէր, հակառակ որ Ամերիկա կը հաշուէր 120,000,000 բնակիչ՝ մինչ Եւրոպա 450,000,000: Վերջին տեղեկութիւնները կը հաւաստեն թէ 1930ին ամերիկեան երկաթուղիներու գիծը կը ներկայացնէ աշխարհի 40 %ը: Մեծն Բրիտանիոյ երկաթուղիներու գիծը՝ 198,000 մղոն է — պարագայ մը որ ապահովաբար չի փաղաքէր բրիտանական արժանապատուութիւնը: Աւելցնենք թէ Ամերիկա աշխարհի ամենաընտիր երկաթուղիներու սխտամբ ունի ո՛չ միայն տարածութեան այլ թէ՛ քնիքական և վարչական տեսակէտներով: Ամերիկեան ընկերութիւնները թէ՛ ամենախոշոր ամսականներ կը վճարեն և թէ՛ ամենաաժան փոխադրավարձով ապրանք և ճամբորդ կը փոխադրեն: Անբաղդատելիօրէն աւելի սուղ են անգլիական երկաթուղիի ընկերութիւններու փոխադրութեան ծախքերը և գիները, ինչ որ չէ թերացած աննպաստ կերպով ներգործելու անգլիական ճարտարարուեստի զարգացմանը վրայ բոլոր այն հրապարակներուն մէջ որ գերմանական և ամերիկեան ապրանքներով սղողուած են:

Եթէ անցնինք հողագործութեան, հոս ալ Ամերիկա գլած անցած է իր բոլոր եւրոպացի մրցակիցները: Մեր ծեր Եւրոպան կը ջանայ արդարացնել իր տնտեսութիւնը և անկարողութիւնը առարկելով թէ ըլլայ ճարտարարուեստական, ըլլայ հողագործական գետնի վրայ՝

Ամերիկա իր արտակարգ բարգաւաճումը կը պարտի բնութեան քմահաճ առատածեօնութեան: Ճշմարտութեան մէկ մասն է այս. բնութեան պարզեւները խիստ քիչ օգտակարութիւն պիտի ունենային եթէ ամերիկեան կորովը և ձեռներէց սգին չզիտնային չափազործել զանոնք: Այս ճշմարտութիւնը ապացուցանելու համար կրկին ստիպուած ենք գիմելու թուանշաններու վկայութեան:—

Ամերիկայի ագարակները

1850	իմ	մօտ	1,500,000
1860	,,	,,	2,250,000
1870	,,	,,	2,750,000
1880	,,	,,	4,000,000
1890	,,	,,	4,500,000
1900	,,	,,	5,750,000
1913	,,	,,	7,500,000

Ամերիկեան արջառները

1850	մօտ	18,000,000
1860	,,	23,000,000
1870	,,	27,000,000
1880	,,	33,000,000
1890	,,	53,000,000
1900	,,	44,000,000
1913	,,	70,000,000

Ամերիկայի ճիւղերը

1850	մօտ	5,000,000
1860	,,	6,000,000
1870	,,	8,000,000
1880	,,	11,000,000
1890	,,	14,000,000
1900	,,	18,000,000
1913	,,	21,000,000

Կը տեսնէք թէ Ամերիկայի յառաջդիմութիւնը համընթաց քալած է թէ՛ հողագործական և թէ՛ ճարտարարուեստական մարզերուն մէջ: Կան մարդիկ որ կը կարծեն թէ Ամերիկայի գերազանցօրէն հողագործական երկիր մըն է: Այս թիւը ըմբռնումը փարատելու համար, ըն-

թերցողին նկատումանը կը յանձնենք հետևեալը:—

Գործարաններու մէջ շինուած ամերիկեան ապրանքներու արժէքը			
1850	մօտ	տոլար	1,250,000,000
1860	,,	,,	2,000,000,000
1870	,,	,,	4,250,000,000
1880	,,	,,	5,500,000,000
1890	,,	,,	9,500,000,000
1900	,,	,,	12,000,000,000
1913	,,	,,	23,000,000,000

Երկրագործական բերքերու արժէքը

1850	մօտ	տոլար	900,000,000
1860	,,	,,	1,250,000,000
1870	,,	,,	2,000,000,000
1880	,,	,,	2,250,000,000
1890	,,	,,	3,000,000,000
1900	,,	,,	5,000,000,000
1913	,,	,,	13,000,000,000

Քանի որ երկրի մը յառաջդիմութիւնը կախում ունի իր արտադրողական և սպասողական ուժերէն, բնական է որ թիւը անհրաժեշտ պայմանը ըլլայ այդ կրկնակ ուժերը պահպանելու: Հաւանական է որ ընթերցողը յատուկ զաւաճար մը չունի ամերիկեան ժողովուրդին արտակարգ աճումին վրայ: Հետեւեալ թուանշանները կը ճշգրէն կացութիւնը այդ մասին.

1790	իմ	շուրջ	4,000,000
1800	,,	,,	5,500,000
1810	,,	,,	7,500,000
1820	,,	,,	9,750,000
1830	,,	,,	13,000,000
1840	,,	,,	17,000,000
1850	,,	,,	23,250,000
1860	,,	,,	31,500,000
1870	,,	,,	39,900,000
1880	,,	,,	50,000,000
1890	,,	,,	63,000,000
1900	,,	,,	75,500,000
1913	,,	,,	95,000,000

(Շարունակելի)

20ԻԿ